**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1044 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ծառերը (6 տեղ, 540 կգ ընդհանուր քաշով, 870 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 1,127 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1045 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի նոյեմբերի 4-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված «VW JETTA» մակնիշի ավտոմեքենան (2006 թվականի արտադրության, 4,500 ԱՄՆ-ի դոլար արժողության, նույնականացման համարը՝ 3VWXJ71KX7M062949, «ԱՄ ՄԶՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1046 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի նոյեմբերի 8-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ակացիայի տնկիները (2,050 հատ, 8,030 կգ ընդհանուր քաշով, 9,737,500 դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1047-Ա**
**քաղ. Երևան**

**«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24727-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 06/3-8/33071-16 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/14041-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,900,000 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 010916 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«21»-ը հոկտեմբերի 2016թ.

# «Բնակելի տան մասնակի վերանորոգում»
# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի Արովյան 6 հասցեում գտնվող բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման աշխատանքներ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Մարտակերտի շրջան՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,900,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Գյուրջյան Սամսոնար (անձնագիր՝ AP0212035, տրվ. 23.04.2014թ. 070 կողմից, հեռախոս՝ 097.22.36.76) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Մարտակերտ քաղաքում բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 3,900,000 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Մարտակերտ քաղաքում բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման պայմանագիր, որի արժեքը կազմում է 3,900,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1048-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24676-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32860-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/14042-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10120-16 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 101/104.3.2/5067-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 963,218 դրամ ընդհանուր արժեքով «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N 280916 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 963,218 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-



գործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«6»-ը նոյեմբերի 2016թ.

# «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 3-րդ թաղամաս, 15-րդ փողոց, 9/1 և 9/2 հասցեում գտնվող «Սոցիալական աջակցության կենտրոնի»-ի շենքում ճաղաշարերի պատրաստման ու տեղադրման, անցումի կառուցման և խոհանոցում արտածման օդամուղի տեղադրման աշխատանքներ |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Հոլանդիայի «Մենոնեկհիդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 963,218 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Լոռու մարզ, Թումանյան համայնք, «Սոցիալական աջակցության կենտրոն» |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2016 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Սոցիալական աջակցության կենտրոնի» շենքում վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 963,218 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Սոցիալական աջակցության կենտրոնի» շենքում վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 963,218 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում «Մենոնեկհիդերեն» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1049-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24503-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32705-16 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N ՎՀ/22.2/11801-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (7 տեղ, 553 կգ ընդհանուր քաշով, 807,565.24 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,540 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/6.1

ՀԱՀ 052

**«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ**

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | ՀՀ առողջապահության նախարարություն | Air 052-01 | 305 | 911 | 503,568.63 |
| 2. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ալեքսիսյան Վ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR Air 052-02 | 30 | 153 | 140,223.43 |
| 3. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ա.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | Air 052-03 | 3 | 40 | 126,759.60 |
| 4. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Սիմոնյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 052-04 | 10 | 49 | 37,013.58 |
| **Ընդամենը՝** | | | | | 348 | 1153 | 807,565.24 |
| **Փոխադրման ծախսեր՝** | | | | | | | 2,540.00 |
| **Ընդամենը՝** | | | | | | | 810,105.24 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1050-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24506-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 06/3-8/33177-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՀ/22.1/11636-16 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 700 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (մեկ տեղ (10 արկղ), 88 կգ ընդհանուր քաշով, 2,660,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1051-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/80-2/25048-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/33905-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/1042316 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԲ/22.2/12198-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Օգնության և զարգացման հայկական ընկերակցության (ARDA) կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (օգտագործված ակնաբուժական սարք՝ մեկ տեղ, 13 կգ ընդհանուր քաշով, 985 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 75,000 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող ակնաբուժական սարքն անհատույց հանձնվելու է «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամին՝ Գյումրի քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, մանկատան սաներին և միայնակ ծերերին՝ անվճար բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց ու անհատույց հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1052-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/-2472616 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 06/3-8/33590-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (5 տեղ, 125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղադաշտի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1053-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24678-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32739-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10137-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մակարոնային արտադրանքը (2,000 տեղ, 20,600 կգ ընդհանուր քաշով, 43,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,700 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/6.15

ինվոյս P-D16101101 10.10.2016

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 341 | 736 |
| | | | Այգուտ | 164 | 757 | 1.630 |
| | | | Մարտունի | 73 | 337 | 726 |
| | | | Ղըրաբակ | 81 | 374 | 805 |
| | | | Վահան | 188 | 867 | 1.869 |
| | | | Կալավան | 23 | 106 | 229 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 60 |
| | | | Զորավանք | 31 | 143 | 308 |
| | | | Անտառամեջ | 22 | 101 | 219 |
| | | | Գավառ | 61 | 281 | 606 |
| | | | Թթուջուր | 81 | 374 | 805 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 235 | 507 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 78 | 169 |
| | | | Արտաշատ | 16 | 74 | 159 |
| | | | Գետազատ | 39 | 180 | 388 |
| | | | Մրգանուշ | 16 | 74 | 159 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 60 | 129 |
| | | | Սևաբերդ | 41 | 189 | 408 |
| | | | Զորաղբյուր | 18 | 83 | 179 |
| | | | Աբովյան | 38 | 175 | 378 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 221 | 477 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 69 | 149 |
| | | | Իջևան | 18 | 83 | 179 |
| | | Երևան | | 3201 | 14770 | 31.824 |
| | Ընդամենը | | | 4335 | 20000 | 43.100 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն Բ. Զամբաքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1054-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24963-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/33909-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էֆֆեկտ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03317278) 2016 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 2,332,416 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1055-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/80-2/24611-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 06/3-8/32920-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԱՆ ԷՅԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02628501) 2016 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 218,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1056-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/80-2/24607-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 06/3-8/32919-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հոմբեյս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00111086) 2016 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է զգեստապահարանի և անկողնային պարագաների ձեռքբերում՝ 113,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1057-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-956-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N 01.1/80-2/24243-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 06/3-8/31805-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքում 11 սոցիալական բնակարանի կառուցում» N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N Գ-01/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 75,996,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1058-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/80-2/25047-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32822-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 02/14/13909-16 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 101/108.3.5/5033-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 106,200,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Ստեփանավանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 10/16)
20 հոկտեմբերի 2016թ.

հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

**«Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կառուցված Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի արտաքին և ներքին հարդարում ու հարակից տարածքի բարեկարգում: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Ստեփանավան, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 106,200,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստեփանավանի քաղաքային համայնք՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. տանիքի ջրամեկուսացման աշխատանքների իրականացում - 1,800,000 դրամ,<br>2. շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ - 85,100,000 դրամ,<br>3. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ - 19,300,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է՝ 20.10.2016 թ-ից մինչև 31.08.2017թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների և ծառայությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ.<br>1. տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ձեռք բերում և կառուցման աշխատանքների իրականացում - 95 քառ. մետր - 1,800,000 դրամ,<br>2. էլեկտրոնունացման, ջրամատակարարման – ջրահեռացման համակարգերի կառուցում, ջեռուցման համակարգի մոնտաժում, սանհանգույցների կառուցում և դրանց համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 24,500,000 դրամ,<br>3. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում տրավերտինե, բազալտե սալիկների, ներկանյութերի և այլ նյութեր ձեռք բերում – 1,700 քառ. մետր – 27,000,000 դրամ,<br>4. հատակների, պատերի հարդարման աշխատանքների իրականացում և անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 2,100 քառ. մետր – 32,600,000 դրամ<br>5. տարածքի բարեկարգում, կառուցապատման այլ աշխատանքների իրականացում - 8,000 քառ. մետր – 19,300,000 դրամ,<br>6. ավտոտրանսպորտային ծախսեր – 1,000,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Լոռու մարզպետարան, Ստեփանավանի քաղաքային համայնք |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1059-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՐՄԴԱՅՎԻՆԳ» ՍՈՒԶՈՐԴՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24966-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/33904-16, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 9-ի N 1/02.2/12875-16 և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 5/05.2/54604-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Տիգրան Ազիզբեկյանի միջոցներով, որպես օժանդակություն, «Արմդայվինգ» սուզորդների ակումբ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված սուզորդական սարքավորումների և հանդերձանքի (3 տեղ, 72.9 կգ ընդհանուր քաշով, 3,746.55 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 121,250 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Արմդայվինգ» սուզորդների ակումբ» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1060-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 01.1/80-2/25121-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 06/3-8/34124-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2016 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 400 լիտր լվացող միջոցի ձեռքբերում՝ 933,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Դարֆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02609379) 2016 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 4 հատ անվադողի ձեռքբերում՝ 190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վալիռով» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01007901) 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 263,045.26 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) ԱՄՆ-ի քաղաքացի Նարեկ Թաշճեանի հետ (անձնագիր՝ 472701412) 2016 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N 01-10.10.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) ԱՄՆ-ի քաղաքացի Կատերին Ռոզա Սնիգի հետ (անձնագիր՝ 512031007) 2016 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N 01-10.10.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1061- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 01.1/80-2/24907-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N ԱԲ/22.2/11944-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/33217-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (համակցված հավաքածու (վիտրեոռետինալ և ֆակո միջամտությունների համար)՝ 1 տեղ, 6.8 կգ, 2,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1062- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 01.1/80-2/24289-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՀ/22.2/11630-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 06/3-8/32421-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 237 արկղ, 1870 կգ քաշով, 166,434.29 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,059.52 եվրո, ցանկը կցվում է, «Ջվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

14/6.18

**Առաքման բեռի ցանկ**

**համաձայն N 164796, 164830, 164797, 164798 հաշիվ-ապրանքագրերի**

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.5 |
| 2 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 2700 | 1838.7 |
| 3 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 4200 | 20979.00 |
| 4 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.50 |
| 5 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 10300 | 51448.50 |
| 6 | Դելամանիդ, 50 մգ, դիտ., բլիստեր | 17472 | 45951.10 |
| 7 | Լինեզոլիդ, 600մգ, կաղապարով դիտ. | 7520 | 40796.00 |
| 8 | Իշիհարա թեստ, գունային տեսողություն, 38 պնակ | 1 | 233.75 |
| 9 | Ասեղ, միանգամյա օգտագործման, Լուեր 19G (1.1 x 40 մմ) կրեմագույն, ՆԵ | 11300 | 186.45 |
| 10 | Ներարկիչ, մեկանգամյա օգտագործման, Լուեր, 10մլ | 3100 | 105.09 |
| 11 | Ասեղ, միանգամյա օգտագործման, Լուեր 21G (0.8 x 40 մմ) կանաչ, ՆՄ | 9900 | 128.70 |
| 12 | | | |
| 13 | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **166434.29** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1063- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24919-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N ԱԲ/22.2/12009-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 06/3-8/33786-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 166 արկղ, 950 կգ քաշով, 6,054.65 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,567 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

[illegible] բեռի ցանկ

համաձայն N 164840, 164698 [illegible]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 1850 | 1259.85 |
| 2 | Ամիկացինի սուլֆատ 500մգ փոշի, սրվակ | 340 | 547.74 |
| 3 | Ներարկման ջուր, 10 մլ, պլաստիկ ամպուլ | 480 | 36.1 |
| 4 | Ձեռնոցներ, զննման, լատեքսյա, մեկ անգամյա օգտ., փոշով չպատված, միջին չափս | 9400 | 243.46 |
| 5 | Կաթիլաներարկման "Y" կոմպլեկտ, յուէր փականով, օդաթափանցիկ, ստերիլ, միանգամյա օգտագործման | 4800 | 1584 |
| 6 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.5 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | 6054.65 |

14/6.19

"MEDECINS SANS FRONTIERES" N4 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 01538594 M.S.F. FILIALE D'ARMENIE

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1064- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N Մ-069-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/80-2/25049-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 06/3-8/33781-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 5-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-069-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2016 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N Գ-13/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական դեղորայքի («Մեպիվաստեզին») ձեռքբերում՝ 82,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1065- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-620-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 3/08.2/3068-16 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 01.1/80-2/25210-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբեի 9-ի N 06/3-8/34385-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 2015 թվականի մարտի 12-ին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 2015 թվականի մարտի 12-ին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի» ծրագրի մասին» N Մ-620-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-855-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրեմիում գազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0533932) 2016 թվականի նոյեմբերի 3-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/7-Ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի բալոնի ձեռքբերում՝ 350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1066- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24920-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 06/3-8/33782-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-170-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 09.09.2016թ. N Մ-857-Աորոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը (կահույք՝ 1 տեղ, 7,090 կգ քաշով, 19,387.90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 5,475 դրամ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ամերիկյան համալսարան» կազմակերպության
Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից
«9» նոյեմբերի, 2016թ.

«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ
(Լրամշակում)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նորարար գաղափարների զարգացումը և ձեռնարկությունների հիմնադրումը Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործ | Սառա Չիթչյան<br>Բնակության վայր. Ն.Վիստա փողոց 344, CA 90036, Լոս Անջելես, ԱՄՆ<br>Անձնագրի համար՝ 500531635, տրվել է՝ 10.07.2006-ին, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ) հիմնադրամ<br>Մարշալ Բաղրամյան պողոտա 40<br>Երևան, 0019<br>Հայաստանի Հանրապետություն<br>ՀՎՀՀ՝ 01511187 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի ամերիկյան համալսարան, Մ. Բաղրամյան պողոտա 40, Երևան<br>Կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ<br>2016թ.-118,515,000 ՀՀ դրամ/ անհատ բարերար/<br>2017թ.- 21,485,000 ՀՀ դրամ/անհատ բարերար/<br>2018թ.- 10,000,000 ՀՀ դրամ/անհատ բարերար/ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի ամերիկյան համալսարանը և համալսարանի ուսումնական ծրագրերում որպես մասնակից ներգրավված ուսանողներն ու շրջանավարտները.<br>• Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ<br>• Անգլերենի դասավանդումը որպես օտար լեզու<br>• Տնտեսագիտություն<br>• Գործարար կառավարում<br>• Արդյունաբերական ճարտարագիտություն և համակարգերի կառավարում<br>• Համակարգչի և տեղեկույթի գիտություն<br>• Հանրային առողջապահություն<br>ՀԱՀ-ի դասախոսական կազմը կհամագործակցի երիտասարդների հետ նոր գաղափարների մշակման և զարգացման ուղղությամբ:<br>Կենտրոնից ազատ և անվճար օգտվելու հնարավորություն կունենան նաև այլ բուհերի ուսանողները (այդ թվում նաև ՀՀ մյուս մարզերից) և ավագ դպրոցի աշակերտները, որոնք ունեն նորարարական գաղափարներ և ցանկանում են զարգացնել դրանք:<br>Կենտրոնի կողմից առաջարկվող միջոցառումների և կենտրոնից օգտվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն գործընկերներին և կտարածվեն ՀԱՀ բոլոր էլեկտրոնային տեղեկատվական գործիքների (վերկայք՝ www.aua.am, սոցիալական ցանցերի էջեր՝ https://www.facebook.com/AUArmenia, https://twitter.com/auanewsroom, https://www.instagram.com/aua_insta/) և ՀԱՀ լրատուի միջոցով:<br>Կենտրոնից կօգտվեն տարեկան 400 և ավելի ուսանողներ և շրջանավարտներ ինչպես Հայաստանի ամերիկյան համալսարանից, այնպես էլ այլ բուհերից և կազմակերպություններից՝ հաշվի առնելով, որ մուտքն ազատ է լինելու բոլորի համար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 մարտ 2016 – 31 դեկտեմբերի 2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը կիրականացվի հետևյալ փուլերով.<br>1/ 01.03.2016 – 30.03.2016<br>Կենտրոնի համար նախատեսված անհրաժեշտ գույքի ցանկի պատրաստում, |



| | | |
|---|---|---|
| | | շուկայի ուսումնասիրություն ՀԱՀ գնումների բաժնի աշխատակիցների և հիմնադրվող Կենտրոնի տնօրենի կողմից:<br>2/ 01.03.2016-30.04.2016<br>Համակարգիչների և հատուկ ուսումնական տեխնիկայի և կահույքի ձեռք բերում և ներմուծում– 30,000,000 դրամ:<br>Խմբային զուգահեռ ուսուցման նորարար կենտրոնի տեխնիկան և կահույքը ՀԱՀ-ը ձեռք է բերելու SteelCase S.A. ընկերության կողմից և ներմուծելու է Հայաստան Ֆրանսիայից:<br>Համակարգիչները ձեռք են բերվելու HP ընկերության կողմից և Հայաստան են ներմուծվելու ԱՄՆ-ից:<br>Ներմուծված սարքավորումների և կահույքի միջոցով կշահագործվի կենտրոնի տարածքի մի մասը, իսկ մյուս մասի համար սարքավորումներ ձեռք կբերվեն ծրագրի հաջորդ տարիների ընթացքում:<br>3/ 01.03.2016-31.12.2016<br>**Կենտրոնի տեխնիկական բազայի համալրման նպատակով համակարգիչների, սարքավորումների և կահույքի ձեռք բերում և ներմուծում՝ 88,515,000 դրամի արժողությամբ:**<br>4/ 01.05.2016-31.05.2016<br>Կենտրոնի գույքի տեղադրում ՀԱՀ մասնագետների և տեխնիկական աշխատակազմի կողմից: Փոխադրման և տեղադրման գործողությունները կավարտվեն մինչև 2016թ. հունիսը:<br>5/ 01.06.2016-30.06.2016<br>Կենտրոնի բացման արարողության կազմակերպում և իրականացում՝ ՀԱՀ հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում:<br>Միջոցառումները կիրականացվեն ՀԱՀ վարչական աշխատակազմի և 25-ամյակի տոնակատարությունների կազմակերպչական կոմիտեի կողմից: Կազմակերպված միջոցառումների համար նախատեսված բոլոր ծախսերը կիրականացվեն ՀԱՀ կողմից:<br><br>Ներմուծված սարքավորումների և կահույքի միջոցով կշահագործվի կենտրոնի տարածքի մի մասը, իսկ մյուս մասի համար սարքավորումներ ձեռք կբերվեն ծրագրի հաջորդ տարիների ընթացքում: |

| | | |
|---|---|---|
| | | 6/ 01.01.2017-31.12.2017<br>Կենտրոնի տեխնիկական բազայի համալրման նպատակով համակարգիչների, սարքավորումների ձեռք բերում և ներմուծում արտերկրից, ինչպես նաև կահույքի նախագծում և պատրաստում՝ 21,485,000 դրամի արժողությամբ:<br>7/ 01.01.2018-31.12.2018<br>Կենտրոնի տեխնիկական բազայի համալրման նպատակով համակարգիչների, սարքավորումների ձեռք բերում և ներմուծում արտերկրից, ինչպես նաև կահույքի նախագծում և պատրաստում՝ 10,000,000 դրամի արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Համակարգիչների ձեռք բերում և ներմուծում (1 HP մոնիտոր, 3 համակարգիչներ և 26 բոլորը մեկում համակարգիչ) HP ընկերության կողմից – 12,400,000 (2016թ. մարտ-ապրիլ)<br>2. Խմբային զուգահեռ ուսուցման նորարար կենտրոնի ձեռք բերում և ներմուծում SteelCase S.A. ընկերության կողմից – 17,600,000 (2016թ. մարտ-ապրիլ)<br>3. Կահույքի նախագծում և պատրաստում – 15,215,000 (2016թ. մարտ-մայիս)<br>4. 134 համակարգիչների և 2 բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ներմուծում- 64,000,000 (2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր)<br>5. Սարքավորումների և կահույքի ձեռք բերում- 9,300,000 (2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր)<br>6. Համակարգիչների և սարքավորումների ձեռք բերում և ներմուծում արտերկրից - 14,485,000 (2017թ. հունվար-դեկտեմբեր)<br>7. Կահույքի նախագծում և պատրաստում- 7,000,000 (2017թ. հունվար-դեկտեմբեր)<br>8. Համակարգիչների և սարքավորումների ձեռք բերում և ներմուծում արտերկրից - 7,000,000 (2018թ. հունվար-դեկտեմբեր)<br>9. Կահույքի նախագծում և պատրաստում- 3,000,000 (2018թ. հունվար-դեկտեմբեր) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, | ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող |



| | | |
|---|---|---|
| | տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Ծրագրի ընթացքում նախատեսված են եռամսյակային և տարեկան ամփոփ հաշվետվություններ ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող հանձնաժողով:<br>Տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀԱՀ Հոգաբարձուների խորհրդին: |

## Ցանկ

N 14/6.13

Հայաստան ներկրվող կահույքի՝

| | Վաճառող | Ապրանք | Քանակ | Արժեք | Ընդ. արժեք |
|---|---|---|---|---|---|
| A | Virco Inc. | Սեղան-աթոռ 9700BRTO<br>Նստատեղը -մուգ կապույտ<br>Գրասեղանի գույնը - (Fusion Maple)<br>Քրոմապատ շրջանակով | 105 | $57.08 | $5,993.40 |
| A | Virco Inc. | Սեղան-աթոռ 9700BRTO<br>Նստատեղը - անտառային կանաչ<br>Գրասեղանի գույնը - (Fusion Maple)<br>Քրոմապատ շրջանակով | 105 | $57.08 | $5,993.40 |
| A | Virco Inc. | Սեղան-աթոռ 9700BRTO<br>Նստատեղը – կարմիր<br>Գրասեղանի գույնը - (Fusion Maple)<br>Քրոմապատ շրջանակով | 20 | $57.08 | $1,141.60 |
| A | Virco Inc. | Գրասեղանի հարթակ աջ կողմի | 25 | $21.40 | $535 |
| A | Virco Inc. | Աթոռի սահող շարժական ոտք | 150 | $0.45 | $67.50 |
| | Virco Inc. | Գրասեղանի ամրակ | 50 | $1.50 | $75.00 |
| | Virco Inc. | Գրասեղանի հարթակ ձախ կողմի | 5 | $21.40 | $107.00 |
| | Virco Inc. | Ճանապարհածախս դեպի Հայաստան, Երևան, 20 ֆուտ, բեռի զտաքաշը 4,860կգ<br>Բեռնարկղի համարը: CRXU3002556 | | $5,475 | $5,475 |
| | | Ընդամենը | | | $19,387.90 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ-1067- Ա**

**քաղ. Երևան**

**ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (WWF-Armenia) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ««ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱԶՆՎԱՑԵՂ ԵՂՋԵՐՈՒԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 01.1/80-2/25212-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 02/14/14544-16, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 9-ի N 5/08.2/54596-16, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 11-ի N ՌՄ/ԱՊ-2/8735-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 06/3-8/34622-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 14-ի N 01/21.1/4412-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) (ՀՀ, քաղ. Երևան, Լյուքսեմբուրգի 7, բն. 19, ՀՎՀՀ՝ 00861992) կողմից իրականացվող՝ 172,561 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով ««Դիլիջան» ազգային պարկում կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում» ծրագիրը (կցվում է):

3. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին ու Դիլիջանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

**Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

COMMISSION OF THE GOVERNMENT OF RA CHARITABLE PROGRAMS COORDINATING 02508251

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն
Կարեն Մանվելյանի կողմից
«10» նոյեմբերի 2016թ

ստորագրություն/ԿՏ

««Դիլիջան» ազգային պարկում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հիմնել կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն «Դիլիջան» ազգային պարկի 10 հա ցանկապատված տարածքում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | 1. **Կովկասի բնության հիմնադրամի (CNF)** հայաստանյան ներկայացուցչության **հասցե՝** Հայաստան, 0010, Երևան, Վարդանանց փող. փակուղի, 8 շենք **Հեռ.՝** +374-60-273010<br><br>2. **Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (TJS)** հայաստանյան ներկայացուցչության **հասցե՝** Հայաստան, 0019, Երևան, Պռոշյան 11/1 **Հեռ.՝** +374-10-588983 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)<br>**Հասցե՝**<br>ք. Երևան, Նյուբեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 1/1 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83<br>+374 10 54 61 56<br>**Էլ. հասցե՝** office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Տավուշի մարզ, «Դիլիջան» ազգային պարկ<br><br>Բնագավառ՝ բնապահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 172,561 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր վաթսունմեկ) Եվրո, |



| | | |
|---|---|---|
| | | որից 100,000 Եվրոն՝ Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS) կողմից, 72,561 Եվրոն՝ Կովկասի բնության հիմնադրամի (CNF) կողմից |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.11.2016-31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see below) |

| Ծրագրի բաղադրիչների փորձողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Էլեկտրական ցանկապատի գնում և տեղադրում | մարտ 2017 - հոկտեմբեր 2017 | 1800 |
| 2. Կերակրի աղի գնում | հուլիս 2017 - դեկտեմբեր 2017 | 5000 |
| 3. Անձնակազմի տնակի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 55028 |
| 4. Խոտի պահեստի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 12552 |
| 5. Երկու կերակրատեղերի պատրաստում | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1097 |
| 6. Տեխնիկական վերահսկողության իրականացում (անձնակազմի տնակ, խոտի պահեստ, կերամաններ) | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1827 |
| 7. Էլեկտրական ենթակայանի կառուցում | նոյեմբեր 2016 - հունիս 2017 | 6731 |
| 8. Այցելուների համար ենթակառուցվածքների ստեղծում (դիտակետների կառուցում, ինֆորմացիոն վահանակների տեղադրում, տուրիստական երթուղիների մշակում և այլն) | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2017 | 3252 |
| 9. Ազնվացեղ եղջերուի գնում և ներմուծում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 21079 |
| 10. Ազնվացեղ եղջերուի տեղափոխում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 21000 |
| 11. Բազմացման կենտրոնի համար կահույքի և սարքավորումների ձեռքբերում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 5000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 12. Բազմացման կենտրոնի բացման արարողության կազմակերպում | հոկտեմբեր 2017- դեկտեմբեր 2017 | 2000 |
| | | 13. Եղջերուների ձեռքբերման համար Ռուսաստան, Վրաստան, Իրան և այլ երկրներ գործուղման ծախսեր | մարտ 2017 – դեկտեմբեր 2017 | 10494 |
| | | 14. Ծրագրի կառավարում (աշխատակազմի հավաքագրում և վերապատրաստում, հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և այլն) | նոյեմբեր 2016 – դեկտեմբեր 2017 | 12062 |
| | | *2016թ. հուլիսի 1-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 30-ը իրականացված գործարքները, որոնց համար արտոնություններ չեն ակնկալվում* | | |
| | | Ենթակառուցվածքների նախագծում (անձնակազմի տնակ, խոտի պահեստ, կերակրամաններ) | մայիս 2016-հոկտեմբեր 2016<br>«ԿԵԼԿԸ ՇՈՋ» ՍՊԸ | 5769 |
| | | Դեպի բազմացման կենտրոն տանող շուրջ 320 մ անտառային ճանապարհի կառուցում | «Նաիրի-Նունե» ՍՊԸ | 7408 |
| | | Տեխնիկական վերահսկողության իրականացում Դիլիջան ազգային պարկի անտառային ճանապարհի կառուցման աշխատանքների նկատմամբ | օգոստոս 2016-սեպտեմբեր 2016<br>«ԳԱՍ» շենքերի ու կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ | 462 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | 172,561,որից կատարված գործարքների 13639 Եվրոյի համար արտոնու-թյուններ չեն ակնկալվում |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Ծրագրի բաղադրիչների գործողությունները** | **Ժամկետներ** | **Արժեքը Եվրոյով** |
| | | 1. Էլեկտրական ցանկապատի գնում և տեղադրում | մարտ 2017 - հոկտեմբեր 2017 | 1800 |
| | | 2. Կերակրի աղի գնում | հուլիս 2017 - դեկտեմբեր 2017 | 5000 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3. Անձնակազմի տնակի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 55028 |
| | | 4. Խոտի պահեստի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 12552 |
| | | 5. Երկու կերակրատեղերի պատրաստում | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1097 |
| | | 6. Տեխնիկական վերահսկողության իրականացում (անձնակազմի տնակ, խոտի պահեստ, կերամաններ) | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1827 |
| | | 7. Էլեկտրական ենթակայանի կառուցում | նոյեմբեր 2016 - հունիս 2017 | 6731 |
| | | 8. Այցելուների համար ենթակառուցվածքների ստեղծում (դիտակետերի կառուցում, ինֆորմացիոն վահանակների տեղադրում, տուրիստական երթուղիների մշակում և այլն) | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2017 | 3252 |
| | | 9. Ազնվացեղ եղջերուի գնում և ներմուծում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 21079 |
| | | 10. Ազնվացեղ եղջերուի տեղափոխում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 21000 |
| | | 11. Բազմացման կենտրոնի համար կահույքի և սարքավորումների ձեռքբերում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 5000 |
| | | 12. Բազմացման կենտրոնի բացման արարողության կազմակերպում | հոկտեմբեր 2017- դեկտեմբեր 2017 | 2000 |
| | | 13. Եղջերուների ձեռքբերման համար Ռուսաստան, Վրաստան, Իրան և այլ երկրներ գործուղման ծախսեր | մարտ 2017 – դեկտեմբեր 2017 | 10494 |
| | | 14. Ծրագրի կառավարում (աշխատակազմի հավաքագրում և վերապատրաստում, հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և այլն) | նոյեմբեր 2016 – դեկտեմբեր 2017 | 12062 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | -//- | | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ բնապահպանության նախարարություն, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Կովկասի բնության հիմնադրամի (CNF), Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (TJS) | | |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS)<br>• Կովկասի բնության հիմնադրամի (CNF)<br>• WWF-Կովկասյան գրասենյակ՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով:<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով |

Փաստաթուղթը կազմեց՝ Ծրագրերի ադմինիստրատոր՝ Ծովինարա Շարոյան հեռ՝ (055) 997061

10 նոյեմբերի 2016թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1068 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24501-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 06/3-8/32922-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի հայկական թանգարանի կողմից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված Հայաստանի Հանրապետության զինանշանով ափսեի և պաստառի (2 տեղ, 3,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 131.35 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1069 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24502-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32746-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դանիայի թագավորության՝ Հայաստանի Հանրապետության դեսպանության կողմից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված մետաքսի վրա հայկական զինանշանի (մեկ տեղ, 125 կգ ընդհանուր քաշով, 7,255 դանիական կրոնին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,981.25 դանիական կրոն, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1070 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/-2449916, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9973-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32741-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Ընտանիքի փրկության» հիմնադրամի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (3 տեղ, 40.62 կգ ընդհանուր քաշով, 150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի լրամշակված ցանկ

14/6.11

| Անվանում | Քաշ | Արժեք |
|---|---|---|
| Հագուստ (նոր) | 33.62 կգ | 120 ԱՄՆ դոլար |
| Խաղալիքներ (նոր) | 7 կգ | 30 ԱՄՆ դոլար |
| | Ընդհանուր 40.62 կգ | Ընդհանուր 150 ԱՄՆդոլար |

«Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Հրայր Մուրադյան ________ Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1071 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24509-16 ,Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9971-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32740-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամի հասցեով ուղարկված բեռների ներմուծման և բաշխման ծրագիրը՝

1) ԱՄՆ-ից անհատ բարերար Նաիրա Նալբանդյանի կողմից ուղարկված նոր հագուստը՝ 2 տեղ, 61.32 կգ ընդհանուր քաշով, 200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը.

2) ԱՄՆ-ից անհատ բարերար Լիդա Ռոստոմյանի կողմից ուղարկված նոր հագուստը՝ 1 տեղ, 26.360 կգ ընդհանուր քաշով, 250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատանը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1072 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24508-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 06/3-8/32446-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Պրեմիում» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 630,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1073 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24965-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/339071-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 408,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1074 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 01.1/80-2/24401-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 06/3-8/32356-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Մայրի» հասարակական կազմակերպության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա և դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02526227) 2016 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված՝ պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է գազի կաթսայի ձեռքբերում՝ 308,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության
տնօրեն Զարուհի Մանուկյանի կողմից
«17» հոկտեմբերի 2016թ.

## Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների ինտեգրումը հասարակության մեջ:<br>Ծրագիրը ուղղված է՝<br>1.Բացահայտելու հատուկ կարիքներով երեխաների անհատական օժտվածությունները եւ հնարավորությունները:<br>2.Ապահովելու երեխաներին օրական ութ ժամ կենսատարածքով,<br>3.Ապահովելու երեխաներին հասակակիցների հետ շփման հնարավորություն մշակութային համատեղ նախագծերին մասնակցելու միջոցով:<br>4.ժամանակի ընթացքում փոխելու հասարակության մեջ արմատավորված կարծիքը հատուկ կարիքներով երեխաների վերաբերյալ եւ հրավիրել ուշադրություն նրանց կարիքներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ) |
| 3. | Բարեգործը | 1.Գերմանիայի Դաշնային Հանրապետությանն առընթեր BMZ հիմնադրամ Հասցե՝ Վայնմայստեր շտրասսե 16, D-10178 Բեռլին<br>2.Անտրոպոսոֆական բժշկության զարգացման հիմնադրամ, Շվեյցարիա, Դորնախ:<br>3. Բուժական մանկավարժության խթանման հիմնադրամ ( SBH , Հոլանդիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն «Մայրի» ՀԿ |

| | | |
|---|---|---|
| | | ՀՎՀՀ 02594556, Եղբայրության 1, Շենգավիթ վար[illegible] |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սկզբնական շրջանում՝ ք. Երևան, հետագայում՝ [illegible] մարզեր:<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 35 141 000 (Երեսունհինգ միլիոն հարյուր քառասունմեկ [illegible]) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ցանկացած ախտորոշմամբ վեց տարեկանից բարձր տարիք ունեցող հատուկ կարիքներով անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինությունում 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումներով ապահովում:<br>1. Ներքին հարդարման աշխատանքներ.պահանջվող գումարն է 1,500,000.00 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ : Ներքին հարդարման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն 2014-ի ընթացքում<br>2. Կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար ) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամսի վերջ:<br>3. Արհեստանոցները սարքավորումներով և նյութերով ապահովման համար անհրաժեշտ գումարն է 4,798,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ:<br>4. էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) դրամ<br>5. «Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,<br>6. Գազաֆիկացում, սպասարկում 1,902,000.00 (մեկ միլիոն ինը հարյուր երկու հազար) ՀՀ դրամ<br>7. ՍՈՍ Սիսթեմս ՍՊԸ անվտանգության համակարգի տեղակայում՝ 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:<br>8. Մինիբուսի ձեռք բերում Վրաստանից 1,948,000 (մեկ միլիոն ինը հարյուր |



| | | |
|---|---|---|
| | | քառասունութ հազար) ՀՀ դրամ<br>9. Աղմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միփոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ*<br>*(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում:)<br>10.Գազի սպառման հետ կապված ծախս 7,745,000.00 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ,<br>11.Ջրի սպառման ծախս 840,000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 ՀՀ դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)<br>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>6. Փայտամշակման արհեստանոցի կահույք, կահույքի հումք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>7. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>8. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր |

| | | |
|---|---|---|
| | | և գործիքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>9. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար մատիտներ, ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 848,000.00 (ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>10. Փայտամշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000.00 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>11. Էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) ՀՀ դրամ<br>12. «Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000.00 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ` տարեկան 57,600.00 (Հիսունյոթ հազար վեց հարյուր) էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս եւ տարեկան կտրվածքով 62,400.00 (Վաթսուներկու հազար չորս հարյուր)) ՀՀ դրամ հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս:<br>13. Գազաֆիկացում, սպասարկում 1,902,000.00 (մեկ միլիոն ինն հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, որից` գազի կաթսա և պատկանելիքներ առաջին հարկի համար – 844,000 (վեց հայուր հազար), գազի կաթսա երկրորդ հարկի համար – 308,000 (երեք հարյուր ութ հազար) ՀՀ դրամ , գազաֆիկացում - 350,000 (երեք հայուր հիսուն հազար) դրամ, գազի սպասարկման վճար տարեկան - 40,000 (քառասուն հազար) դրամ<br>14.Անվտանգության համակարգ` տարեկան սպասարկումով 908,000 (Ինն հարյուր ութ հազար) ՀՀ դրամ` որից տեղադրում` 368,000 (Երեք հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ և տարեկան սպասարկում 54,000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ:<br>15. Մինիբուսի ձեռք բերում 1,948,000 (մեկ միլիոն ինն հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ<br>16. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնու- |



| | | |
|---|---|---|
| | | թյուններից) *(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում)<br>17. Գազի տարեկան սպառման ծախս մոտավորապես 770,000.00 (յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ և գազի հաշվիչ 45,000 (հառասունհինգ հազար) ՀՀ դրամ:<br>18. Ջրի սպասարկման ծախս տարեկան մոտավորապես 84,000.00 (ութսունչորս հազար) ՀՀ դրամ: (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված վարչակազմակերպչական ծախսերը | 1. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնու-թյուններից) |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1075 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/80-2/25050-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/33906-16 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվակա-նի հոկտեմբերի 24-ի N 611 գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «263,562,100 դրամ» բառերը փոխարինել «577,050,780 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հոկտեմբերի 10-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1076 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 01.1/80-2/25234-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 02/14/14543-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 06/3-8/34626-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 58,842,740 դրամ արժողությամբ «Միաբանական շենքի ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռենոմե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03524556) 2016 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N 06Շ/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքներ՝ 58,842,740 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
« 3 » նոյեմբեր 2016 թ.

**Միաբանական շենքի ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքներ**

**ԾՐԱԳԻՐ**

Հր. 14/1

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանական շենքի ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 58,842,740 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Եկեղեցին, հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 հոկտեմբեր 2016թ. – 10 հունվար 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանական շենքի ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքները՝ 58,842,740 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանական շենքի ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքները՝ 58,842,740 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1077 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա» ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՃԱՂԱՑԱՆՑԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 01.1/80-2/25229-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 02/14/14647-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 06/3-8/34627-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի կողմից իրականացվող՝ 12,471,120 դրամ արժողությամբ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար ճաղացանցերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Ռոբերտ Գրիգորյան ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52193855) 2016 թվականի հոկտեմբերի 21-ին կնքված՝ N 05Շ/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատուհանների և դարպասի ճաղացանցի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,471,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
« 3 » նոյեմբեր 2016 թ.

## Գարեգին Ա կրթական կենտրոնի համար ճաղացանցերի տեղադրում

# ԾՐԱԳԻՐ

Հր 14/2

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի համար ճաղացանցերի պատրաստման և տեղադրման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 12,471,120 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Եկեղեցին, հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 21 հոկտեմբեր 2016թ. – 10 մարտ 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի համար ճաղացանցերի պատրաստման և տեղադրման աշխատանքները՝ 12,471,120 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի համար ճաղացանցերի պատրաստման և տեղադրման աշխատանքները՝ 12,471,120 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ու Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1078 - Ա**
**քաղ. Երևան**

# «ԱԶԳԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/80-2/25052-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 02/14/14337, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N ԻԱ/ԱԲ-2/8589-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 06/3-8/33784-16, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 101/104.3/5167-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 7-ի N 01/6635-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ազգային Ջրային Համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 47,980 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Հարմարվողականության փոքր ծրագրերի իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. «Ազգային Ջրային Համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարա-կական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզպետներին:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի
Նախագահ Արևիկ Հովսեփյանի կողմից
« 31 » հոկտեմբերի 2016թ.

# Հարմարվողականության փոքր ծրագրերի իրականացում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքների հարմարվողականությունը, միաժամանակ նպաստելով համայնքների կայուն և համաչափ զարգացմանը:<br>Մարգահովիտ համայնքում ծրագրի ենթանպատակն է ավանդական էներգակիրների խնայողության և այլընտրանքային էներգիայի օգտագործման արդյունքում բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքի հարմարվողականությունը, միաժամանակ նպաստելով մանկապարտեզում առողջապահապան իրավիճակի և սանիտարական պայմանների բարելավմանը, ապահովելով համայնքի բնակչության հարմարավետությունն ու անվտանգությունը:<br>Մեծ Պարնի համայնքում ծրագրի ենթանպատակն է ավանդական էներգակիրների խնայողության այլընտրանքային էներգիայի օգտագործման, դեգրադացված գյուղատնտեսական հողերի վերականգնման արդյունքում բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքի հարմարվողականությունը՝ ապահովելով համայնքի բնակչության հարմարավետությունն ու անվտանգությունը, գյուղատնտեսական օգտագործելի հողատարածքների վերադարձը շրջանառություն:<br>Բասեն համայնքում ծրագրի ենթանպատակն է բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքի բնակչության հարմարվողականությունը առողջապահական տեսակետից, ապահովելով նրանց համար անվտանգ ու հուսալի խմելու ջրամատակարարում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Եվրամիության հանձնաժողովը, Ավստրիական զարգացման գործակալությունը, Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունը, Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ազգային ջրային համագործակցություն գիտական, էկոլոգիական ՀԿ; ՀՎՀՀ 01005235 |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու և Շիրակի մարզեր: Սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **47980 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ** |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառու հանդիսացող ՀՀ-ում գրանցված հասարակական կազմակերպություններ, ՀՀ քաղաքային և գյուղական դպրոցներ, ՀՀ քաղաքացիներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 Հոկտեմբեր 2016 – 30 Ապրիլ 2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **Ծրագիրն ունի ակնկալվող հետևյալ արդյունքները՝**<br>1. Յուրաքանչյուր համայնքում գործողություններ իրականացնելու համար մրցույթային կարգով ընտրված են կապալառու կազմակերպությունները:<br>2. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքում տեղադրված է 5կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ, համայնքի փողոցներում տեղադրված են փողոցային լուսավորության 18 հատ էլեկտրախնայող LED լամպեր, համայնքի մանկապարտեզում տեղադրված է ջրատաքացուցիչ խոհանոցի համար:<br>3. ՀՀ Լոռի մարզի Մեծ Պարնի համայնքում վերականգնված է 23 հա դեգրադացված գյուղատնտեսական հողատարածք, տեղադրված է 3կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ, համայնքի փողոցներում տեղադրված են փողոցային լուսավորության 15 հատ էլեկտրախնայող LED լամպեր:<br>4. ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնքում կառուցված է քլորակայանի շենք և տեղադրված է քլորացնող սարք, վերակառուցված է համայնքային խմելու ջրատարի վտանգված հատվածը, որն անցնում է սելավատարի միջով:<br>**Ծրագրի շրջանականերում ըստ ակնկալվող արդյունքների նախատեսված են հետևյալ գործողությունները՝**<br>1. Ծրագրի կառավարում: Ծրագիրը կառավարելու համար ընտրված են ծրագրի ղեկավար, հաշվապահ, ջրամատակարարման ինժեներ և ինժեներ էլեկտրիկ, վարձակալված մեքենա՝ համայնքներ այցելելու նպատակով: (Ծրագրով նախատեսված բյուջե – 8950 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 հոկտեմբեր 2016- 30 ապրիլ 2017):<br>2. Ֆոտովոլտային համակարգերի գնում, տեղադրում և փորձարկում Մարգահովիտ և Մեծ Պարնի համայնքներում (համապատասխանաբար 5 և 3 կվտ հզորություններով): (Ծրագրով նախատեսված բյուջե – 14400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 նոյեմբեր 2016 -28 փետրվար 2017):<br>3. Էլեկտրախնայող LED լամպերի գնում և տեղադրում Մարգահովիտ և Մեծ Պարնի համայնքներում (համապատասխանաբար 18 և 15 հատ): (Ծրագրով նախատեսված բյուջե – 6600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 նոյեմբեր 2016 – 31մարտ 2017):<br>4. Ջրատաքացուցիչ սարքի գնում և տեղադրում Մարգահովիտ համայնքի մանկապարտեզի խոհանոցում: (Ծրագրով նախատեսված բյուջե – 380 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01նոյեմբեր - 31դեկտեմբեր 2016): |

| | | |
|---|---|---|
| | | 5.1 Մեծ Պարնի համայնքում գյուղատնտեսական հողերի վերականգնման համար 23 հա հողատարածքի հերկում (Ծրագրով նախատեսված բյուջե – 1070 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 10-30 նոյեմբեր 2016)<br>5.2. Կորնգանի սերմի գնում (Ծրագրով նախատեսված բյուջե – 2880 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01-25 մարտ 2017)<br>5.3. Նախապես հերկված տարածքում կորնգանի ցանքսի իրականացում (Ծրագրով նախատեսված բյուջե – 1000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01մարտ-30 ապրիլ 2017)<br>6.1.Բասեն համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավման համար (քլորակայանի կառուցում և ջրատարի վերակառուցում) աշխատանքային նախագծի մշակում (Ծրագրով նախատեսված բյուջե – 1500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01նոյեմբեր – 31 դեկտեմբեր 2016)<br>6.2. Բասեն համայնքում քլորակայանի շենքի կառուցում (Ծրագրով նախատեսված բյուջե – 3200 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 փետրվար – 31 մարտ 2017)<br>6.3. Քլորացման սարքի պատվիրում, ձեռք բերում, տեղադրում և կարգաբերում Բասեն համայնքի քլորակայանի շենքում (Ծրագրով նախատեսված բյուջե – 3500 եվրոյին, համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 նոյեմբեր– 31 դեկտեմբեր 2017)<br>7.2.Բասեն համայնքում ջրատարի համար շինմոնտաժային աշխատանքների իրականացում, ջրատարի փորձարկում (Ծրագրով նախատեսված բյուջե – 4500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ժամանակահատված՝ 01 դեկտեմբեր 2016 – 31 մարտ 2017) |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ֆոտովոլտային համակարգերի պատվիրում, ձեռք բերում, տեղադրում և փորձարկում –14400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>2. LED լամպերի պատվիրում, ձեռք բերում և տեղադրում –6600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>3. Ջրատաքացուցիչ սարքի ձեռք բերում և տեղադրում –380 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>4. Քլորացման սարքի պատվիրում, ձեռք բերում, տեղադրում և կարգաբերում – 1 կոմպլեկտ – 3500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>5. Քլորակայանի կառուցման և ջրատարի վերակառուցման համար աշխատանքային նախագծի մշակում –1500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>6. Բասեն համայնքում քլորակայանի շենքի կառուցում - 3200 եվրոյին, համարժեք ՀՀ դրամ<br>7. Շինմոնտաժային աշխատանքների իրականացում –4500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>8. Կորնգանի սերմի պատվիրում և ձեռք բերում –2880 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>9. 23 հա դեգրադացված հողատարածքի հերկում -1070 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>10. Նախապես հերկված տարածքում կորնգանի ցանքսի իրականացում - 1000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 8950 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, որը ներառում է ֆինանսական ծառայություններ (բանկային ծախսեր) և ադմինիստրատիվ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում ԱԶՀ ՀԿ-ն Հայկական կարմիր խաչի ընկերության, Կլիմայի փոփոխության կենտրոնի, ՀՀ Լոռ և Շիրակի մարզպետարանների, այդ մարզերում գործող Օրհուս կենտրոնների, Մեծ Պարնի, Մարգահովիտ, Բասեն համայնքների ինչպես նաև 4 ՀԿ-ների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է Հայկական Կարմիր խաչի ընկերությանը տրամադրել տրամադրել ամսական պատմողական, եռամսյակային ֆինանսական և պատմողական, ինչպես նաև ավարտական ֆինանսական և պատմողական հաշվետվություններ: Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից ընտրված աշխատակցի կողմից իրականացվելու է գործողությունների իրականացման մոնիտորինգ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1079 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 07/80-2/25124-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 06/3-8/34129-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, ծիսական մոմի արտադրության համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված պարաֆինի (920 տեղ, 22,780 կգ ընդհանուր քաշով, 34,819.2 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1080 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 9-ի N 01.1/80-2/25185-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 06/3-8/34616-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված վերելակը (3,009 կգ ընդհանուր քաշով, 22,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,227,110 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1081 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 01.1/80-2/25122-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 06/3-8/34131-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա, 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա և 2016 թվականի մարտի 18 N Մ-186-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գայսաթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03313002) 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրականացնել գազաֆիկացման աշխատանքները և ստանալ գազաֆիկացման աշխատանքների կատարման և փաստացի գազամատակարարման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները՝ 2,425,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1082 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 01.1/80-2/25123-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 06/3-8/34130-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04112197) 2016 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Դպրոցի ԱՌՆ գրադարանի» համար պատրին ամրացվող գրապահարանների ձեռքբերում՝ 980,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1083 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24682-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/14043-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 05/18.2/4616-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32749-16 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01/14.2/3953-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 163,748,799 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2016 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀՏՀ-05/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բիդեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00450801) 2016 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀ/Մ-1/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի



կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 162,148,799 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«24» հոկտեմբերի 2016թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքում մանկապարտեզի կառուցում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքի բնակիչների կյանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, Աղցք համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 163.748.799,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799 դրամ<br><br>տեխնիկական հսկողության իրականացում՝1.600.000,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799,00 դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1084 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ» ՓԲԸ-Ի ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/80-2/24614-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 02/14/13908-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N ՎՀ/22.2/11799-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32738-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01/21/4262-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական ոrակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,254,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N ԱԲՍ-09/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների ձեռքբերում՝ 460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N ԱԲՍ-11/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական պարագաների ձեռքբերում՝ 454,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված՝ N ԱԲՍ-12/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական պարագաների ձեռքբերում՝ 339,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«24» հոկտեմբերի 2016թ.

**« Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ն վիրահատությունների համար անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Խաչարձան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 1.254.100,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի հիվանդները ու բուժանձնակազմը |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հոկտեմբերի 05-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի հոկտեմբերի 05-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում հետևյալ պարագաների գնում.<br>2 հատ հիվանդի տեղափոխման պատգարակ՝ 390.000,00 դրամ<br>2 հատ բժշկի աթոռ՝ 70.000,00 դրամ<br>կարանջուր՝ 454.700,00 դրամ և՝ 339.400,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ից<br><br>2 հատ հիվանդի տեղափոխման պատգարակի /390.000,00 դրամ/<br>2 հատ բժշկի աթոռի / 70.000,00 դրամ/<br>կարանջուրի / 454.700,00 դրամ և 339.400,00 դրամ/<br><br>ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 1.254.100,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ- 1085 -Ա**

**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱԹՍԱՅԱՏԱՆԸ ՆՈՐ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24550-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/14040-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 26-ի N 06/3-8/32579-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 3,078,467 դրամ արժողությամբ «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթսայատան մասնակի վերանորոգման, ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,078,467 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«25» հոկտեմբերի 2016թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից
«Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի
կաթսայատանը ջեռուցման նոր համակարգի
տեղադրում»

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Վանաձորի տարեցների տան կաթսայատանը տեղադրել ջեռուցման նոր համակարգ, որի արդյունքում հնարավոր կդառնա բարելավել տարեցների տանը մշտապես բնակվող 55 ծերերի կենսապայմանները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամ» Հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է է 3,078,467 (երեք միլիոն յոթանասունութ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տարեցների տանը բնակվող 55 ծերեր |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հոկտեմբերի 2016թ - 20 դեկտեմբերի 2016թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է Վանաձորի տարեցների տան կաթսայատանը տեղադրել ջեռուցման նոր համակարգ, որի արդյունքում հնարավոր կդառնա բարելավել տարեցների տանը մշտապես բնակվող 55 ծերերի կենսապայմանները: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի տևողությունը՝ 2016թ հոկտեմբերի 20-ից մինչև 2016թ դեկտեմբերի 20-ը: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3,078,467 (երեք միլիոն յոթանասունութ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ: Իրականացվելիք աշխատանքների մանրամասն ցանկը ներկայացված է պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ ազատում 3,078,467 ՀՀ դրամի չափով համաձայն ծառայությունների պայմանագրի առ 20.10.2016թ, կնքված «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Զրաշատի փ., թիվ 1, ՀՎՀՀ 01547716) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի,<br>2. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ<br>3. Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Երևանի գրասենյակների կողմից, եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1086 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24682-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 28-ի N 06/3-8/32921-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հաշմանդամի համար նախատեսված ավտոմեքենայի (2004 թվականի արտադրության CHEVROLET VENTURE մակնիշի, նույնականացման համարը՝ 1GNDX03E84D188325, 1,885 կգ քաշով, 750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,000 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՋՄ ՄՏ) ներմուծման և Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերանին անհատույց հանձման ծրագիրը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1087 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N 01.1/80-2/24519-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/32747-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 07.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (12 տեղ, 92 կգ ընդհանուր քաշով, 182,802 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 4,025 ռուսական ռուբլի, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռները ստանալուց հետո հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՑԱՆԿ

**ՌԴ-ից անհատ բարերար Հայկ Բալայանի կողմից 14549931 և 14561595 ավիաբեռնագրերով ուղարկված բեռների**

14/6.4

| N | Անվանում | Քանակ | Արժեք |
|---|---|---|---|
| 1 | Քնապարկ Forclaz 10L | 20 հատ (1հատը` 15999 ռուբլի) | 31980 ռուբլի |
| 2 | Ռադիոկառավարվող ինքնաթիռ Multiplex Funjet ultra KIT (լրակազմ` առանց շարժիչի և մարտկոցների) | 10հատ (1 հատը` 8100 ռուբլի) | 81000 ռուբլի |
| 3 | Մարտկոց Fullymax LiPo 22.2v 6s 20c 2700 | 3 հատ (1 հատը` 3610ռուբլի) | 10830 ռուբլի |
| 4 | Վրան Bluebird կանաչ, TTT-001.09 | 7 հատ (1 հատը` 1980 ռուբլի) | 13860 ռուբլի |
| 5 | Վրան Royal House Camping | 1 հատ (1 հատը` 7154 ռուբլի) | 7154 ռուբլի |
| 6 | Վրան Сплав "Skif3" | 3 հատ (1 հատը` 4320 ռուբլի) | 12960 ռուբլի |
| 7 | Ուսապարկ Сплав "PK1" | 5 հատ (1 հատը` 2725.20 ռուբլի) | 13626 ռուբլի |
| 8 | Կանանց կիսաճտքավոր կոշիկներ Crosser2 | 8 զույգ (1 զույգը` 1299 ռուբլի) | 10392 ռուբլի |
| 9 | Ամսագիր "Карабахский курьер | 20 հատ (1 հատը`50 ռուբլի) | 1000 ռուբլի |

Ընդհանուր արժեքը` 182 802 ռուբլի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1088 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/80-2/24724-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի 1-ի N 06/3-8/33220-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (2 տեղ, 291 կգ ընդհանուր քաշով, 481 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 316.47 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՑԱՆԿ

**ԱՄՆ-ի «Հայ օգնության ֆոնդ»-ի կողմից S00002197 առ 14.09.16թ. հաշիվ ապրանքագրով (ինվոյս) ուղարկված բեռի (բժշկական պարագաների)**

14/6.5

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քանակը | Քաշը կգ /բրուտտո/ | Քաշը կգ /նետտո/ | Արժեքը /դոլար/ | Ծագման երկիրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բժշկական պարագաների կոմպլեկտ | | 21 տուփ | 81 | 60 | 84 | ԱՄՆ |
| 2 | Վիրահատական դրենաժային սարք | 1 | 18 տուփ | 40 | 38 | 90 | ԱՄՆ |
| 3 | Վիրահատական թել | | 250 տուփ | 68 | 64 | 150 | ԱՄՆ |
| 4 | Ստերիլ վիրակապեր | 1 | 350 տուփ | 48 | 44 | 90 | ԱՄՆ |
| 5 | Միանվագ խողովակներ /կրակազմ/ | | 250 հատ | 54 | 50 | 67 | ԱՄՆ |
| Ընդամենը | | 2 | - | 291 | 256 | 481 | |

Վարչատնտեսական բաժնի պետ՝
Պողոսյան [illegible]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 նոյեմբերի 2016 թվականի N Մ - 1089 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

